քարոզութեամբ Ս. Մեսրովպայ և բնակութեամբ աշակերտաց նորին և պահելով 'ի նոսա նշխարաց սրբոց զոր յԵրուսաղեմ բերին, և կոչին Խալաթիկ և Անապատ Թարգմանչաց և մենաստան. յանապատին կանգուն կայ հին եկեղեցի գեղեցիկ զանգակատամբ, և 'ի հարաւոյ նորա մատուռն և գերեզման նահատակի 'ի նմին, զոր Ծիրանաւորն կոչեն. նոյնպէս և 'ի մենաստանին որ առ խաչաբակաւ՝ կայ անսիւն եկեղեցի գմբեթաւոր. որոց շինութիւն կամ հիմնարկութիւն ասի սկզբնաւորեալ 'ի սրբոյն Մեսրովպայ յերկրորդումն քարոզութեան իւրում զԳարդմանոյ ձորով, յորում զհեթանոսամիտ բնակիչսն իշխանաւ նոցին խուրսաւ հած յուղղութիւն. յիշատակք նորա և աշակերտաց նորին գտանին և 'ի հարաւոյ կողմանցս 'ի Զլբերդ գաւառի (176)։ Մերձ սոցին ամբառնայ Հաչաբերդ? լեառն։

164. Գեօղք 'ի կողմանքս նշանակին Պանոց, Կիբանց, Շոպոխ, Կենկերէ, Պոճան, և այլն։ Յելից սոցա ընդ մէջ Շէմքոր և խոչխարա գետոց կան նշանաւոր տեղիք առ Կիւլմբոր և Նիւկոր? գիւղոքք և Քիւլիւ-լեռամբ. և են, Հոռոմաշէն աւերակ անապատն Կուսանաց, և Գոանոյ անապատ, ուր Մխիթար Գոշ գրեաց զԳիրս Դատաստանացն, և Զորէ բերդ և Անապատ, բերդն նոյն Թուի ընդ Մոմոռ բերդի զոր նորոգեաց մի 'ի Կանեմանեանց յԺԷ (165) դարու և շինեաց մենաստան մեծ, որ և ցարդ շէն կայ։ Իսկ յարևմտից հարաւոյ սոցա՝ աւերակք Գէոքոքի բերդի, անուանի յԺԳ դարու. — Տանձաքարաթ անապատ, անուանի 'ի Ժ դարէ. և ՓԱՌԻՍՈՍ աւերք քաղաքատեղի և վանք, երբեմն աթոռ իշխանաց Փոքր Սիւնեաց, յորմէ Թուի և անուն ՓԱՌԻՍԷՍ գաւառի Արցախոյ։

165. Դ. ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՕԼ գաւառ կայ յելից Այրումայ, յինքն փակելով զկուր յիւրոց ելից. 'ի հնումն ԳԱՐԴՄԱՆ գաւառի Ուտիոյ վիճակէր, և է երկիր դաշտավայր, ջերմ և բարեբեր. անուանի վասն մեծի քաղաքին Գանձակայ, որ և մայրաքաղաք Աղուանից եղև 'ի միջին դարս. 'ի սմա խաղան 'ի կուր գետքն Ճէլիր, Շէմքոր, կենձէ և Գոռակ կամ Կոռակ ըստ մասին. և բաժանի 'ի վիճակս համանուանս գետոցն։ Ի ՃԿԵՐ՝ որ 'ի հիւսիսոյ ամենեցուն կայ, նշանաւոր գեօղք են Եերմաչէր, Շարգաչէր, Պարոմ և Բարոմ, որում մերձ ուխտն Մինասայ Ճգնաւորի, և լեառն Գառնաձէր կոչեցեալ, յորում Սարաչէն հանգրուանք բնակչաց գեղջն Գառնակերի. և քարահաթ լեռանի։ Մերձ նմին են և Ծաղկոց վանք և Անապատ։ — Առ Շամքոր գետով կայ Այրամ գեօղ 'ի հիւսիսոյ, և 'ի հարաւոյ նորա 'ի ձախմէ գետոյն Շէմքոր գեօղ, առ աւերակք ՀԷՄԳՕՐ կամ ՀԱՄԽՈՐ քաղաքի, զոր 'ի Զ դարու շինեալ ասէ ոմն 'ի մերոց պատմչաց, և այլք աւանդեն 'ի Կանեմանեան տոհմէ Հայոց շինեալ, որք Թուին ինձ Մամգոնեանք (Մամ և Կոն), և որոց դատաստերքք բազումք են 'ի կողմանս յայսոսիկ, թէպէտ և ոչ հինք. 'ի ԺԱ դարու Պարոքք տիրացան քաղաքիս, և յետ բազում անցից աւերեցաւ 'ի սկիզբն անցելոյ դարու. նշանաւոր 'ի շինուածս քաղաքին էր Սիւնն կամ Աշտարակ Շէմքորայ աղիւսակերտ և գեղեցիկ 200' 'ի բարձրութիւն բերելով նմանութիւն զաշտարակին Անւոյ և զզոյգ մինրայից Էրզնուումայ, որ 'ի սասանութենէ կործանեցաւ յամին 1840։ Յաւերակս քաղաքին երևին կամուրջք և կարաւանատունք։ Ի հարաւոյ Շէմքորայ շինեալ էր գաղղիականաց Գերմանացւոց զԱՆԷՔԵՍ գեօղ յամին 1818, այլ առ հինի թաթարաց և օգոյն անբարեխառնութեան՝ լքեալ մեկնեցան 'ի Հելենոր Գանձակայ (167)։

166. Զարևելեան խաղիւք խոչխարայ մերձ 'ի կուր ձգի այժմեան ԳԱՐԴՄԱՆ վիճակ, յանուն գաւառին մեծի, յորմէ երբեմն բոլոր իսկ Ուտիացիք և Աղուանք Գարդմանեցիք կոչէին, և Թագաւորն Աղուանից՝ Տէր Գարդմանայ. առ գետեզերբն կայ ցարդ Գարդման կամ Քրիմանիկ աւան, որոյ բերդ շինեցաւ յԷ դարու, որպէս Թուի մերձ ՄԻՀՐ աւանի, սակաւուք յառաջ շինելոյ. յամին 633 Ջեւանշիր Աղուանից իշխան հանդոյց յիւրաշէնն մեծի եկեղեցւոջ Գարդմանայ զման կենարար փայտին զընկալեալն 'ի Հերակլեայ կայսերէ. Բուղա ոստիկան յամին 854 ըմբռնեաց 'ի սմա զկարիճ զիշխան երկրին, և Աշոտ Երկաթ յինքն գրաւեաց զայն. ապա Պարսք, Վիրք և Թաթարք տիրացան. այժմ աւերք է տեղին և որ շուրջ զնովաւ. յեկեղեցւոջն մեծի ասին լինել գերեզմանք Կանեմանեանց, և 'ի նոցանէ իսկ շինեալ ասեն և զԳարդման։ Նշանաւորք 'ի վիճակիս ըստ մասից կուսէ են Կոռնովանք, Ամենափրկիչ վանք, Շահ-Տիրամեանց-յոր որ է Շամիրամայ-յոր յիշատակեալ յԺԲ դարու յորում ժամանակի յիշի և Բերդ Շամիրամայ՝ 'ի նահանգիս յայսմ։

167. Բնիկ վիճակն Գանձակայ՝ որ ԿԵՆՃԷ կամ Գանջայ կոչի յայլազգեաց, յելից հարաւոյ այլոցն կայ, ըստ հարաւոյ գետոյն իւրոյ ցկուրակ գետ. և է սա բնավայր ՀԱԿԱՇԷՆ գաւառի Ուտիոյ, որ այսպէս կոչեցաւ յանուն Շակէ ազգի կամ Սակաց Սկիւթացւոց ասպատակելոց 'ի Հայս յԻ դարու յառաջ քան զԲրիստոս. և զանուն նոցա ցարդ համարի կրել Շէքի գաւառ յայնկոյս Կուրայ յարևելս Գանձակայ (184)։ Քաղաքն ԳԱՆՁԱԿ որ ոչ յիշատակի առ նախնի մատենագիրս և 'ի բազմից բազում կարծիս բերէ զհիմնադրէն, 'ի մերոյս Աղուանից պատմչէ ասի՝ ՅԱՂԹայ կամ 'ի Վղթայ ուստեմնէ ոստիկանէ շինեալ յամին 846 կամ 848, և լեալ մայրաքաղաք Աղուանից յետ Պարտաւայ. յելս ԺԴ դարու Փատլուն ամիրայ տիրեաց կողմանց Գանձակայ և յամին 1088 Պուղան ոմն հրամանաւ Մելիքշահի. յամին 1140 մեծաւ սասանութեամբ երկրի կործանեցաւ քաղաքն, և կորոյս անձինս և գանձս բազում, այլ ընդ հուպ վերականգնեալ՝ աթոռ եղև ամիրայից կամ կուսակալաց Պարսից, և բարգաւաճեր յոյժ յԺԲ և յԺԳ դարս, յորում Թաթարք աւերեցին զայն. այլ գարձեալ շինեալ՝ միշտ անուանի և բարգաւաճ եկաց ցաւուրս Շահաբասայ, որ առ քինու Օսմանեանց ետ քակել զքաղաքն և շինել զնորն Գանջայ որ է ԿԵՆՃԷ՝ 'ի ձախմէ գետոյն 'ի հարաւոյ հնոյն, որոյ մնան փլածք ևեթ, և մնկեթ մի կանգուն՝ որ յառաջն եկեղեցի էր և 'ի նմա գերեզման երանելւոյ նահատակին խոսրովայ պատանւոյ։ Բա-